

ՅԱՆՅԱՒՈՐ ՇՈՒՆ

« Եղբայր, գիտե՞ս մի նոր բան ,
 « Տափադունչ շուն մեր պահապան,
 « Այն բարի շունն , ըզգաստն , արթուն ,
 « Որ օրինակ էր ամենուն ,
 « Վախ և սարսափ չար գայլերուն ,
 « Հըլու , հնազանդ հովիւներուն ,
 « Այնպէս , կ'ասեն , որ այս առտու կերեր է ,
 « Մէկ փոքրը գառնիկ
 « Եւ նորա մարիկ .
 « Յետոյ կատղած , հովուին վըրայ վազեր է : —
 « Ինչ կ'ասես , քա՛ւ . — Այս է լըսածս : —
 « Հաւատարմ չի գար , Տէր Աստուած » :
 Այսպէս ահա խօսէին ,
 Երկու ոչխարք 'ի դաշտին .
 Տափադունչ շունն արեան տեղին բըռնւած
 Արդէն գործողն անարգ մահու էր դատուած :
 Ոչխարաց տէրն կը պահանջէր ,
 Որ յանցաւորն շուտ պատժուէր ,
 Օրինակ միւս շներուն :
 Շուտով եղաւ քըննութիւն :
 Հազար վըկայք հարցափորձի յատենին
 Ամենայն բան յայտնի տեղով ցըցուցին :
 Մեղաւոր շունն արընտէր՝
 Երկու հարուած մահաբեր ,
 Գործած հրեք մեղաց տեղ
 Պէտք էր գըլխուն ընդունէր ,
 Նոյն իսկ արիւն թափած տեղ :
 Ժողովեցան տոտիկ տոտիկ
 Մահուան տեղին Շընեք , Գառիւնք :
 Այս վերջիններս՝ յանցաւորին
 Պատիժն մեղմել կը խընդրէին :
 Ատեան մերժեց նոցա խընդիրը :
 Մէկդի կեցան մըռիկ մընջիկ :
 Բոլոր շներըն մեծ պըզտիկ
 Կարգաւ կեցան նոցա քովիկ ,
 Տըրտում տըխուր , ականջնին կախ՝ գումարած ,
 Մեղքընալով իրենց եղբայրն անճըրկած :
 Ամենք խորին լռութեան մէջ
 Կը սպասէին գործին շուտ վերջ :
 Եւ ահա մէջ տեղ տափադունչ շունն ածին ,
 Վիզը հաստկեկ չըւան , հովիւք երկու դին :
 Նա՛ աչքն արցունք , մէկ մի երկկէք նայելով
 Ճառ մի զրուցեց , խրատական այս խօսքերով .

- « Ո՛վ դուք, որոց այս վայրկեան
« Ձեմ իշխեր ես կոչել եղբայր և բարեկամ,
« Դուք որ վրկայք էք իմ անբաղդ վիճակիս,
« Տեսէք, մի չար ցանկութիւն ուր տեղ հասուց զիս .
 « Տասըն տարի ես անընդհատ
 « Կեանք վարեցի ժուժկալ ըղգատտ :
 « Մէկ հեղ, մի քայլ խոտորեցայ,
 « Վայ ինձ, մեռնիմպիտի ահա . . .
« Երէկուան օր անտառին մէջ լոյսն 'ի մթան,
« Մինակ կայնած էի հօտին պահապան .
« Յանկարծ գայլ մի յափըշտակեց մեր հօտէն
« Գիրուկ գառուկ, և կը փախէր ուտելէն .
 « Յատկեցի ես, հասայ գայլին .
« Նա՝ ձըգելով անուշիկ որսն 'ի գետին,
 . « Վըրսա վազեց : Նոյն տեղ իսկոյն
« Պատիժն առաւ, չունչը փըչեց 'ի ծոց մահուն .
 « Օրինաւոր էր այս բանն,
 « Այլ դէշ եղաւ վերջաբանն :
 « Գառնուկին կէսն առկա կեցած
« Բերնիս ջրեր վար վազեցին, փորս էր քաղցած :
 « Շատ կրօնեցայ անձիս դէմ,
« Այլ անօդուտ, յաղթընեցայ չար դէնն :
 « Կերայ դառին մինացած կէս
 « Չոր թողեր էր գայլն աներես,
 « Եւ ահա այդ վայրկենին
« Եկաւ հասաւ գառնուկին մայր լալադին .
 « Սիրտըս ելաւ, խեղքըս գընաց .
 — « Ձըլլայ որ զիս մասնէ յանկարծ . —
 « Եւ որպէս զի չարը չարով խափանի,
« Մէկէն նոյն տեղ ցաւադին մայրը պատռեցի :
« Այլ ի՞նչ տեսնամ. ձեռքն հաստ բիր մեր հովին էր
 « Գըլխուս վըրայ եկեր հասեր . . .
 « Թողութեան տեղ չըմընաց,
 « Վազեցի վրան կատաղած :
 « Այլ, աւաղ, շատ չը գընաց
 « Տեսայ ես զիս շըղթայած :
« Ահաւասիկ արդար պատիժ մեծ մեղքիս .
« Արդէն ես մահը կը տեսնամ 'ի դընչիս :
- « Խըրատ առէք իմ մահուանէս ունկընդիրք,
« Որ փոքրագոյն կարծուած անգամ իսկ չարիք՝
 « Մեծ եղերանց մէջ կը տանի :
 « Ախայի ճամբան է սահուն,
 « Յատակըն խոր և անհուն .
 « Թէ ո՞ր անփոյթ մէկն լինի
 « Կը գըլտրի գըլտիվայր .
 « Ազատութեան չըկայ ճար » :